# Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2024 թվականի համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխությունը պայմանավորված է աշխատանքային գործընթացում առաջացած մի շարք խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

**Առկա խնդիրների նկարագրությունը**

Մասիս համայնքի օրվան նվիրված միջոցառման կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է 25 000,0 հազ"դրամ, սակայն առկա միջոցները բավարար չեն և անհրաժեշտ է լրացուցիչ նախատեսել 16 000,0 հազ"դրամ :

Նոր ուսումնական տարվան ընդառաջ Մասիս համայնքում գծանաշման աշխատանքներ իրականացնելու, հետիոտնային անցումները թարմացնելու համար գործող պայմանագրով նախատեսված միջոցները բավարար չեն, ուստի անհրաժեշտ է լրացուցիչ նախատեսել պայմանագիրի 10%-ի չափով՝ 1 400,0 հազ"դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

| *հ/հ* | *բաժին* | *խումբ* | *դաս* | *Գործառական դասակարգում, նպատակ* | *հոդված* | *Վարչական մասի Ծախսեր* | *Ֆոնդային մասի Ծախսեր* | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ***Ծախսեր*** | | | | |
| 1 | **01** | **1** | **1** | **Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Պարգևատրումներ | 4112 | -16000.0 | | |
| 2 | **01** | **6** | **1** | **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.**Վարչական սարքավորումներ | 5122 | | -1400,0 | |
| 3 | **04** | **5** | **1** | **Ճանապարհային տրանսպորտ.** Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | | +1400,0 | |
| 4 | **08** | **2** | **4** | **Այլ մշակութային կազմակերպություններ.**Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | +16000,0 | | |
| | | | | | | ***0,0*** | ***0,0*** | |
| | | | | ***Ընդամենը*** | | | | |

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ — Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ